Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի

ռեկտորի պարտականությունները

կատարող Է. Ալեքսանյան

«21.05.2025թ.»

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արամ Վիլենի Ղահրամանյանի՝ «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Արամ Վիլենի Ղահրամանյանի (այսուհետ՝ Հեղինակ) կողմից **«Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստում (21.05.2025, արձանագրություն N 4), մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Թ. Շաքարյանի, ի.գ.դ., պրոֆեսորներ Գ.Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Հակոբյանի, Ա.Ղամբարյանի, ի.գ.թ. դոցենտներ Ա.Եզեկյանի, Ա.Ասատրյանի, Տ.Խաչիկյանի և Լ.Հակոբյանի, ի.գ.թ. Մ.Մկրտչյանի, դասախոս Գ.Նավասարդյանի, նիստի քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի:

Ատենախոսության թեման նվիրված է Հայաստանի Հանրապետությունում լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրների հետազոտությանը: Հեղինակի կողմից ընտրված թեման արդիական է և ունի

տեսագործնական նշանակություն՝ պայմանավորված մեր երկրի տնտեսության տարբեր ճյուղերում լիզինգի կիրառման պահանջարկով, լիզինգային հարաբերությունների և լիզինգի պայմանագրի բարդությամբ, ինչպես նաև լիզինգի իրավական ինստիտուտում գոյություն ունեցող իրավակարգավորման և իրավակիրառական խնդիրներով ու դրանց թիրախային լուծման անհրաժեշտությամբ: Հետազոտության արդիականությունն ընդգծվում է հատկապես նրանով, որ դրանում համակողմանիորեն քննության առարկա են դարձել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ լիզինգի ինստիտուտում կատարված օրենսդրական փոփոխությունները:

Ատենախոսության մեջ հեղինակն առաջադրել է ճիշտ նպատակներ ու խնդիրներ, ներկայացրել է ուշագրավ առաջարկություններ, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ուսումնասիրություն իրականացնելիս լայնորեն կիրառվել են ընդհանուր գիտական և զուտ իրավագիտական մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են դիալեկտիկական մեթոդը, անալիզը և սինթեզը, ինդուկցիան և դեդուկցիան, ընդհանրացումը, անալոգիան և այլն: Զուտ իրավագիտական մեթոդներից կիրառվել են պատմաիրավական, իրավահամեմատական, համակարգային վերլուծության և այլ մեթոդները:

Ատենախոսության արժանիքների շարքում կարելի է նշել այն, որ հեղինակի կողմից ուսումնասիրվել է բավականին հարուստ տեսագործնական նյութ՝ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան մասնագիտական գրականություն, գիտական հոդվածներ, միջազգային իրավական ակտեր, հայրենական և արտասահմանյան, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ երկրների օրենսդրություն ու պրակտիկա: Ընդ որում, բացի բուն լիզինգային հարաբերություններին ու լիզինգին վերաբերող աղբյուրներից, հետազոտվել են նաև քաղաքացիական իրավունքի այլ ինստիտուտներին նվիրված նյութեր, ինչն ակնհայտորեն բարձրացնում է կատարված աշխատանքի ու դրանում շարադրված դատողությունների արժեքը:

Ատենախոսությունն արժևորվում է նաև նրանով, որ դրանում ձևակերպված գաղափարներն ու առաջարկությունները կարող են պիտանի լինել լիզինգային հարաբերությունները կարգավորող նորմատիվ բազան և իրավակիրառական պրակտիկան բարելավելու տեսանկյունից, քանի որ վեր հանված ու ձևակերպված հիմնախնդիրներին տրվել են կոնկրետ լուծումներ:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ լիզինգային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը մեր երկրում ոչ բավարար մակարդակի վրա է գտնվում, իսկ իրավակիրառական և հատկապես դատական պրակտիկան չափազանց սուղ է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքից բացի, լիզինգային հարաբերությունների կարգավորմանը նվիրված առանձին օրենսդրական ակտ առկա չէ, մինչդեռ, ըստ հեղինակի, ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կարող են կենսագործվել լիզինգի մասին առանձին օրենքի շրջանակներում: Լիզինգային հարաբերությունների կառուցվածքի և, մասնավորապես, լիզինգային հարաբերություններում վաճառողի ակտիվ ներգրավվածության հանգամանքի վերլուծության արդյունքում Հեղինակը եզրահանգում է, որ լիզինգային հարաբերությունների կարգավորումը չի կարող կառուցվել սովորական երկկողմ գործարքի ձևաչափով՝ դիտարկելով այն զուտ որպես լիզինգատուի ու լիզինգառուի միջև առաջացող հարաբերությունների համակարգ, նման մոտեցումը չի արտացոլում իրերի դրությունը:

Ուշագրավ և ընդունելի է Հեղինակի այն առաջարկությունը, որ անհրաժեշտ է դուրս բերել լիզինգի պայմանագիրը վարձակալության տեսակի իրավական ռեժիմից, իսկ լիզինգին վերաբերող դրույթները ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համախմբել ու կարգավորել առանձին գլխում՝ որպես ֆինանսական ծառայությունների ոլորտում կնքվող առանձին տիպի պայմանագիր՝ հաշվի առնելով, որ լիզինգային հարաբերությունների նպատակը ֆինանսավորումն է, իսկ որպես միջոց կիրառվում է լիզինգի պայմանագիրը:

Աշխատանքում հետաքրքիր առաջարկություններ և վերլուծություններ են արվել նաև լիզինգառու-վաճառող իրավահարաբերությունների, լիզինգի

պայմանագրի էական պայմանների, լիզինգառուի իրավունքների բնույթի, լիզինգի պայմանագրի լուծման և այլ հարցերի վերաբերյալ, որոնք հիմնավորվել են հեղինակի կողմից:

Անհրաժեշտ է նշել նաև, որ աշխատանքը շարադրված է գրագետ, գիտական լեզվով և ոճով, դրանում առկա չեն լեզվական ու քերականական կանոնների շեղումներ:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրևսորել է ինքնուրույն գիտական հետազոտություն կատարելու անհրաժեշտ ունակություններ, ինչպես նաև նկատելի է Հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրներին, միջազգային իրավական ակտերին, տարբեր երկրների օրենսդրություններին և պրակտիկ նյութերին:

Հեղինակի կողմից հրատարակված թվով ութ գիտական հոդվածները համարժեքորեն արտացոլում են պաշտպանության ներկայացվող հիմնադրույթներն ու կատարված կարևոր եզրահանգումները: Բոլոր գիտական հոդվածները տպագրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի համարվող գիտական պարբերականներում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն է արտացոլում ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը: Ատենախոսության կառուցվածքը, ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին:

Այդուհանդերձ գտնում ենք, որ կատարված աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, ինչի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

1. Հաշվի առնելով, որ հայրենական լիզինգային պրակտիկայում լիզինգի պայմանագրի նախագծերը հիմնականում կազմվում են լիզինգային ընկերությունների կողմից՝ Հեղինակն, ըստ էության, լիզինգառուներին համարում է

լիզինգային հարաբերություններում թույլ կողմ և առաջարկում նախատեսել լիզինգառուների իրավունքների պաշտպանության կառուցակարգեր, այդ թվում՝ լիզինգի պայմանագրի պայմանները փոփոխելու, լիզինգային վճարները նվազեցնելու, պայմանագիրը լուծելու հնարավորություններ:

Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործող կարգավորումները բավարար հնարավորություններ են ընձեռում լիզինգառուներին իրենց իրավունքները պաշտպանելու նպատակն իրացնելու առումով: Բացի այդ, լիզինգի տոկոսադրույքները զգալիորեն սուբսիդավորվում են պետության կողմից (այդ կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են բազմաթիվ որոշումներ, որոնց նաև անդրադարձ է կատարվել ատենախոսությունում), հետևաբար վիճելի է լիզինգառուներին որպես թույլ կողմ դիտարկելը և նրանց համար լրացուցիչ իրավական երաշխիքներ ստեղծելը: Պետք է հաշվի առնել նաև, որ լիզինգային հարաբերությունների զարգացման առումով նախ և առաջ կարևոր է մասնագիտացված լիզինգային ընկերությունների գործունեությունն ու նրանց թվի աճը, և այս տեսանկյունից չպետք է իրավական կարգավորումներն անհամաչափ լինեն պայմանագրի ազատության սկզբունքի տեսանկյունից՝ լիզինգառուների համար ստեղծելով իրենց իրավունքները չարաշահելու հնարավորություններ:

2. Ատենախոսության տարբեր հատվածներում նշելով, որ առկա է պետության կողմից ընձեռվող արտոնություններից օգտվելու նպատակով այլ գործարքները լիզինգով քողարկելու, այսինքն՝ շինծու գործարք կնքելու ռիսկ, *Հեղինակն այդուհանդերձ չի մատնանշում նման ռիսկը չեզոքացնելու կամ նվազեցնելու ուղիները: Կարծում ենք՝ նման ուղիների շեշտադրումը արդարացված կլիներ, քանի որ այդ դեպքում պետության կողմից տնտեսության տարբեր ոլորտներում լիզինգի կիրառման արտոնությունների տրամադրումն ու լիզինգային տոկոսադրույքների սուբսիդավորումն ավելի պաշտպանված կլիներ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավախախտումներից ու կծառայեր նման արտոնությունների տրամադրման բուն նպատակներին:*

3. Ընդգծելով վաճառողի դերը լիզինգային հարաբերություններում՝ Հեղինակը նշում է, որ լիզինգատուի, լիզինգառուի և վաճառողի միջև կնքվում է յուրահատուկ

բազմակողմ գործարք, այսպես ասած՝ լիզինգային գործարք, որի կողմերն են հանդիսանում վաճառողը, լիզինգատուն և լիզինգառուն: *Գտնում ենք, որ մեր օրենսդրության պայմաններում նշված հարաբերությունների ձևաչափն ակնհայտ է՝ կնքվում է երկու պայմանագիր՝ լիզինգի ու առուվաճառքի (մատակարարման), որոնցից յուրաքանչյուրն առանձին հանդիսանում է երկկողմ գործարք: Լիզինգային եռակողմ գործարքի վերաբերյալ գաղափարն ավելի շատ տեսական է, իսկ գործնական կիրառման ժամանակ կարող են առաջանալ որոշակի խնդրահարույց հարցեր, օրինակ՝ ո՞րն է այդ եռակողմ գործարքի կնքման պահը, ինչպե՞ս են կողմերն արտահայտում գործարք կնքելու իրենց կամքը, ինչպիսի՞ն է դրա բովանդակությունը, ինչպե՞ս պետք է կիրառվեն գործարքների անվավերության վերաբերյալ դրույթներն այդ դեպքում և այլն:*

4. *Ատենախոսության շրջանակներում գրեթե չեն շոշափվել լիզինգի առարկայի ապահովագրությանն առնչվող հիմնախնդիրները, մինչդեռ պրակտիկայում ապահովագրությունը լիզինգային հարաբերությունների կարևոր մաս է, իսկ ապահովագրության պայմանագրերը՝ լիզինգի պայմանագրերին ուղեկցող պարտադիր կնքվող պայմանագրեր: Կարծում ենք՝ ատենախոսությունն ավելի կշահեր նշված հարցերին ավելի հանգամանալից անդրադառնալու և առաջարկություններ ներկայացնելու դեպքում:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ գտնում ենք, որ Արամ Վիլենի Ղահրամանյանի՝ «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, վերոնշյալ դիտողություններն ու նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան,

աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ պետական կառավարման իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Թ.Ա.Շաքարյան**

Նիստի քարտուղար՝ **Ա.Վ.Հովհաննիսյան**

Ամբիոնի վարիչ Թ. Շաքարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս. Հ. Պողոսյան**